ԽՂՃԻ ԽԱՅԹ

Ա. ՄԽԻԹԱՐԵԱՆՑԻ

I.

Պայծառ գիշեր է. յամրաքայլ լուսին
Հազիւ գընում է առաջ կիսաքուն.
Հեռու միգապատ սարի գագաթին
Փայլում են աստղեր. յոգնած բընութիւն
Հազիւ շընչում է խաղաղ քնի մէջ.
Լուռ են և երգեր նորեկ թռչնակի,
Միայն խոր ձորից տաղտուկ և անվերջ
Լսւում է խոխոջն արթուն գետակի։
Ժամ է և հանգչել վաստակած մարդուն,
Ժամ է մոռանալ հոգսեր ցերեկեան,
Մոռանալ վրրէժ, ոխ, ատելութիւն,
Գոնէ երազում սիրել մի վայրկեան։

II.

Բայց փախչում է քուն մարդու աչքերից.
Անձայն քաղաքում վառ են ճրագներ,
Վառւում են նոյնպէս վրշտեր ու թախիծ
Մարգկային սրրտում. ոչ ոք այս գիշեր
Չի կարող հանգչել։ Եւ ահա հեռւից
Կէս գիշերային մեղմիկ ղօղանջիւն,
Հանգած բընութեան ընգհատելով քուն,

Խաղաց, դողդողաց և ալենման
Ցընգուեց օդի մէջ։ Նորից կեանք առան
Թափուր փողոցներ. նորից ոտնաձայն,
Շըշուկ, աղաղակ տիրեց քաղաքում,
Նորից բարձրաձայն զանգակն է հընչում։

III.

Լուռ է բազմութիւն Աստծոյ յարկի տակ.
Սըրբերի առաջ աղօտ նըշուլով
Այս և այն կողմում փայլում է ճրագ,
Վառւում է կանթեղ առկայծեալ լուսով
Արտասուող Կուսի պատկերի առաջ,
Հեռու մըթան մէջ երևում է խաչ։
Հոգեբուղխ երգեր, տըխուր մեղեդի
Մրանում են հոգու խորին ծածկոյթներ,
Ընկնում է կապանք քարացած սըրտի.
Արթնանում է խիղճ. չարութեան գործեր
Շարւում են մէկ մէկ իրար ետևից
Եւ... և արտասուք գընում է աչքից։

IV.

Հանգչում են կանթեղ, ճրագ և մոմեր,
Տիրում է 'չորս կողմ խաւար անթափանց,
Հընչում են կըրկին ոգելից երգեր—
Լըսում է ամբոխ լուռ, արձանացած։
Եւ ահա, ահա խաւարի միջին
Ծընունդ է առնում դիւթական պատկեր—
Այն խաչ է կանգնած սարի գագաթին
Եւ նորա շուրջը պայծառ կէս գիշեր։
Ահա և խաչւածն—դալկացած երես
Թեքել է պարզած թևերի վերայ,
Ահեղ չարչարանք, ցաւեր աղեկէզ
Տանջում են նորան... և լըռում է նա։

V.

Նորա ճակատին բաց են դեռ վէրքեր,
Մեխած ձեռներից, կողից կարեվէր
Հոսում են արեան շիթերն անդադար
Եւ կաթիլ կաթիլ դըլորւում են վայր։
Արդէն ուժասպառ մարդկային մարմնին
Տիրում է գունատ դալկութիւն մահւան,
Մօտ է խաչւածի վայրկեանը վերջին.
Ու բա՛ւ է, և ցաւն ունի իւր սահման։
Բայց աստուածային վառ են դեռ աչեր.
Զը կայ նոցա մէջ դանդատ, բարկութիւն,
Այնտեղ վառւում է յաւերժական սէր,
Նորա բերանից լըսւում է ներումն։

VI.

«Ներում եմ ես ձեզ... արտասւում էք դուք...
Հաւատում եմ ես չարերի զըղջման...
Բայց, դիտեմ, երկար չի տևիլ այդ սուգ—
Շուտ կը լուսանայ և օրը վաղւեան.
Եւ երբ չէք տեսնիլ ձեր աչքի առաջ
Աստուծոյ Որդուն խաչւած, չարչարւած,
Երբ կը մոռանաք իմ վէրք և արիւն՝
Կ'անցնի և այդ կարճ զըղջման դառնութիւն։
Կըսկըսէք նորից Յուդայի նման
Մատնել, վաճառել ձեր մերձաւորին,
Որ իբրև քարոզ սուրբ ճշմարտութեան
Փուշ է երևել ձեր կոյր աչերին։

VII.

«Կեղծ, փարիսական արդարսիրութեամբ
Քարշ կը տաք նորան դէպ ի Հրապարակ
Եւ ամբարտաւան բարձրամըտութեամբ

Անմեղին մահուան վրճիռ կը կարդաք։
Կըսկըսէք նորից եղբօր վերայից
Հանել, պատառել միակ պատմուճան,
Փըշեր կը կախէք նորա ճակատից,
Գանելով ծաղրել կըսկըսէք նորան։
Թըշառութեան մէջ, որպէս սուտ ընկեր,
Որպէս ուրացող հեռուից կ'արասուէք,
Եւ երբ կը մնայ նա խեղճ և անտէր՝
Բարձրաձայն «ի խաչ, ի խաչ» կը գոչէք։

VIII.

«Ներում եմ ես ձեզ... բայց իմացէք դուք,
Որ պարծանք էք ձեզ ասում իմ անուն,
Որ ծըխում էք ինձ քաղցրաբոյր կընդրուկ,
Որ ինձ կանգնում էք յարկեր զարդարուն,
Որ լաց էք լինում այժմ իմ առաջին՝
Ինձ մի անգամ չէր որ խաչ հանեցին։
Եւ ամենայն օր խաչւում եմ հիմա...
Գիշերեան մըթնով քարշում էք ինձ դուք
Ծաղր ու ծանակով դէպ ի Գողգոթա,
Պաշտում էք յայտնի՝ անտես ու ծածուկ
Մեխում էք ամուր ամուր իմ ձեռներ
Եւ իմ կող ու սիրտ խոցում կարեվէր։

IX.

«Եւ նայում եմ ես լերան գագաթից
Սիրած փայփայած մարդկութեան վերայ.—
Առաջին անգամ չէին տանջում ինձ
Հարուած ու վէրքեր.—բայց վաղ է հիմա
Ամենայն գիշեր ձեր հարուածների
Կըսկիծն ահաւոր. անզուսպ են ցաւեր,
Սաստիկ է տանջանքն անշարժ ձեռների
Եւ այրւում են իմ արիւնոտ վէրքեր...

Հիմա... բոլորած գիշերեան հանդէս
Թափում էք խաչի առաջ արտասուք...
Օ՛, լացէ՛ք, լացէ՛ք—ներում եմ ես ձեզ,
Միայն թէ իրար ներէիք և դուք...

X.

Դատարկ է տաճարն. ալեծուփ մրտքով
Դառնում է ամբոխն անձայն գէպ ի տուն.
Ոչինչ աղաղակ. խաղաղ անվրդով
Հանգչում է չորս կողմն հանգած բնութիւն։
Թեթև, ըսպիտակ ամպերով ծածկուած
Ընջում են լուսին, աստղեր անհամար,
Քընում է հիմա աշխարհ—արարած,
Քընում է և մարդն. բայց երկար երկար
Արթուն է գեռ ձայն զայրացած խըղճի,
Անհանգիստ է քուն, կոշտ է անկողին
Եւ երազներով մրռայլ, ահռելի
Տանջւում է նորա յանցաւոր հոգին...

29 մարտ. 1890 թ.։